«Նուէր մանուկներին» վերնագրի տակ հրատարակվող գրքիկները եօթներորդ հատրին է սա, որ պատմում է գիւղական մի աղքատ, բայց շնորհալի երեսայի արտաձնիկ պատմութիւնը: Ներքին ոչ միայն կաթն է ծախում, այլ և տեսնելով եկեղեցում՝ Բուրժուի նկարները, սիրահարվում է նրանց վրա և ինքն էլ ըսկաւում է նկարել, ի հարկէ, առանց ուսուցչի, լոկ իր ընտանի տաղանդի թելադրութեամբ: Նա երազում է մեծ և հուշակաւոր նկարիչ դառնալ. բայց չըջապատող կենսքը չէ հասկանում երկխայի տեղանքները, երազները. աղքատ Նեւոն, տանից վտնդված, ձմեռվայ մի գիշեր քնում է եկեղեցում և մեռնում է ցրտից: Նրա հետ անհշուտում է նրա մտերիմ բարեկամը, Պատրաշ անուշով չուրը Շատ սրտառու է:

և պատասխանատու տարիներ էին, որոնք ամենայն մի վարչական մարդուց պէտք է պահանջվէր տակաւ և հետաետեւութիւն: Մենք կարծում ենք, որ իշխան Երվանդիէն, շնորհիւ նրա անձնաւորութեան հիմնական յատկութիւններին, աշխուրդում էր լուծել հեշտութեամբ նրա առաջ դրած այնպիսի հարցերը, որոնք ուրիշ անձնաւորութեան ձեռքում կարող էին սխալ կերպով խճճվել և բարդվել: Եւ եթէ եղել են սխալներ, դրանք առաջ են եկել այն զէպերում, երբ նկատվել է չեղում լայն հայեացքներից և խոր թախանցող տեսութիւնից:

Իշխան Երվանդիէն անձնաւորութեան հիմնական յատկութիւններն են, լայն հայեացք ժողովրդի անտեսական և կենցաղաւարական զարգացման վրա, ընդունակութիւնը զանազանելու ժամանակաւոր և մանր գործերն ու զէպերը կենսիցի ընդհանուր հոսանքներից, կատարեալ անշահասիրութիւն և արհամարհանք զէպի զանազան մասնաւոր հաշիւները և զիտաւորութիւնները:

Երվանդիէն անձնաւորութեան այդ հիմնական կէտերը շատ օգնեցին նրա գործունէութեան արդիւնաւորութեանը և նա կարողացաւ նահանգի ազգաբնակչութեան մէջ ներշնչել մեծ յարգանք և հաւատ դէպի վարչութիւնը: Բացի դուռ վարչական, պաշտօնական գործունէութիւնից, իշխան Երվանդիէն յայտնի է ոչ միայն Թիֆլիսի նահանգում, այլ և ամբողջ Ռուսաստանում՝ այն նշանաւոր ծրագրով և ձեռնարկութեամբ, որ կրում է «Գիւղական և սակաւ գրութեան» անունը:

«Մաշկի» մէջ երեք տարի սրանից առաջ մենք նտիրեցինք մի շարք յօդաւորներ այդ գիւղականութեան զրաւագլխի ծրագրի ընտելութեան և ցոյց տուինք նրա մեծ և կարևոր անտեսական նշանակութիւնը: Այդ զրաւագլխի, որ պատկանում է Թիֆլիսի նահանգի գիւղական համայնքներին, ժողովում է և այժմ, և հասել է Պերկայումս խոշոր քանակութեան: Այդ զրաւագլխով գիւղերը կարող են մտցնել զանազան բարեփոխութիւններ իրանց գիւղատնտեսութեան մէջ, ձեռք բերելով մեքենաներ, անցկացնելով ջրանցքներ, շինելով կամուրջներ, բարեկերպ ճաղարկութեան ճանապարհներ և ձեռք բերելով զանազան բոյսեր և սերմեր: Բացի այդ մեծ և հիմնական ծրագրից իշխան Երվանդիէն զբաղված էր և ժողովրդական կրթութիւն խնդրով, որ սակայն պէտք է ժամանակով աւելի ևս մշակվէր և ստանար իրագործութիւն:

Երվանդիէն հետ հետապնդ Թիֆլիսի նահանգից մի նախաձեռնող, աշխիւ, անշահաւէր անձնաւորութիւն, որի գոյժունութիւնը կարող է օրինակ լինել ապագայ գործողներին:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«Ն. Ե. Լ. Ե. — Ա. Աշտուրեանի, հրատարակ. Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկեր. Թիֆլիս, 1897, 137 եր. in 8, գինը 40 կոպէկ:

Ո՛ր է հո. Կինը: Թէև «հո» կոչվում են Սուրբաշուի դատարի ընդի հայերը և հեղինակը Սուրբաշուի կանանց է ի նկատի ունեցել իր նկարագրութիւններին մէջ, բայց մենք համարձակ կարող ենք քննել այդ «հո» բառը և նրա տեղ գնել «գիւղական» բառը: Տեղական, միայն Սուրբաշուի մէջ նկատվող առանձնապատկութիւններ շատ քիչ կան այս նկարագրութիւններին մէջ: Գնելով «գիւղական» բառը, ընդհանրացնելով զրբի անունը բոլոր հայաբնակ գաւառների համար, զոնէ անդրկովկասեան ընդի հայերի համար, մենք մեծ սխալ գործած չէինք լինի. իրաբանայի դատարի մարդ, կարգաւոր պայ գիւղերը, կը գտնի նկարագրութիւններին մէջ անթիւ զմեր, որոնք ստորական են և իր դատարի համար: Բայց միթէ այս հանգամանքը կարող է վնասել զրբին: Գուցէ պ. Աշտուրեան կամեցել է լոկ իր դատարի համար մի մեծագործութիւն կազմել, ցոյց տալ, որ այնտեղ հայ կինը առանձին կենսիցի և առանձին հանգամանքների պատու է, բայց մեր ստացած ասպարոսութիւնն այն է, որ նա տուել է մի նկարագրութիւն, որի մէջ պատկերացրել է գաւառացի կնոջը: Այդպեղ մենք տեսնում ենք գիւղական այդ բանւոր, չարբաշ արարածի ամբողջ կենսքը, տեսնում ենք նրա աշխատանքները, նրա մայրական գործունէութիւնը, նրա հոգին, դարերի նախապաշարմունքները և աղիտութեան մէջ թաղված հոգին: Եւ մինչդեռ այդ հոգին տխուր մը, Պատրաշ անուշով չուրը Շատ սրտառու է:

1874-ին նա տեղափոխվեց պաշտօնով Երևան, իբրև սյուրսեդի նահանգական դատարանի պրօկուրոր, իսկ 1888 թվին նշանակվեց թիֆլիսի նահանգական դատարանի նախագահ և այդ պաշտօնը վարում էր մինչև այժմ, երբ, նշանակվելով թիֆլիսի նահանգապետ, դատաւստանական պաշտօնից անցնում է վարչական պաշտօնին: Մօտ 10 տարի ղեկավարելով նահանգական դատարանը, աշխատում էր մտցնել նրա մէջ տեղական մի քանի հարցերի մասին իր ունեցած անձնական որոշ հայեացքը և ուղղութիւնը: Լի-նելով մի և նոյն ժամանակ և կապիտալ իրա-ւագիտական ընկերութեան նախագահ, նա եռանդուն մասնակցութիւն ունէր ընկերութեան գործերի մէջ և յաճախ կարգում էր իրաւագիտա-կան բեֆերաւաներ:

Մեզ հեռագրում են Նոր-Բայազէտից ամսիս 17-ից. «Այստեղ եկաւ վարդապետական վարդապետը տեղական գործակալի գործը քննելու համար»:

Աստրախանցի մի տիկին, ուղարկած լինելով մի մեծ արկղ զանազան հագուստեղէն կտավաւի գլխաւոր կառավարութեան Թիւրքիայից փախած հայ գաղթականներին բաժանելու համար, թիֆլիսի ս. ոստիկանապետը ուղարկել է այդ հա-գուստեղէնը հայոց Բարեգործական ընկերու-թեան խորհրդին, խնդրելով բաժանել կարօ-տեալ գաղթականներին:

Այս օրերս հրատարակվեց մի նոր օրէնք, ու-րով թոյլ է տրվում հեշտ կերպով բանալ աղ-քատներին և կարօտեալներին երկու խնա-մելու: Ընկերութիւնն և քաղաքական վարչ-յութեան թողտուլեամբ Բնկերութիւնների համար մշակված է ընդհանուր ծրագիր: Այդ ծրագրով ընկերութեան կազմութիւնը և նպա-տի բաշխումը պէտք է լինեն ընդհանուր, ա-ռանց կրօնի, ազգի և դասակարգի խտրութեան:

Թիւրքաւայ մի քանի գաղթականներ սկիզբ են դրել ծխախոտագործութեան Գանձակի գա-ւառի Ոսկանապատ գիւղում: Գաղթականները անցնալ 1896 թվին վերցրել էին տեղական կառաւածատէրերից և գիւղացիներից հողը, խոս-տանալով արգելները հաւասարադէս կրիւն: Ա-ռաջին տարվայ փորձը կատարեալ աջողութիւն է ունեցել: Մօտ 10 դեռեալներ տեղից ստացվել է մինչև 1500 ռուբլի, որի կէսը պայմանի հա-մաձայն տրվել է գիւղացիներին: Այժմ Ոսկա-նապատի գիւղացիներից շատերը վճռել են ի-րանց ջրաբեր տեղերի մի մասը յատկացնել այդ բոյսին: Ոսկանապատի ծխախոտը շատ ա-ջող է դուրս գալիս, հոտաւէտ է և ծախվել է պուղը 12 ռուբլով: Ոսկանապատին կից գիւղե-րի ժողովուրդը հետաքրքրված է այդ փորձերով և մտադիր է հետեւել Ոսկանապատի օրինակին:

Մեզ հաղորդում են, որ ս. Սարգիս եկեղեցու նոր վանահայրը մտադիր է եկեղեցու ծովը վերցնել և դարձնել նրան ուխտատեղի: Գիււար թէ ծխականները համաձայնութիւն տան վանա-հօր այդ ծրագրին:

Ֆրանսական դրամատէրերի մի-իւրում որոշել է բանալ Ան ծովի արեւելեան ափում կլիմա-յական մի կայարան և մեծ հիւանդա-նոց, որոնց համար նշանակել է մի միլիոն ռուբլի գումար: Այդ կայարանը պէտք է գրաւի հիւանդներին ոչ միայն Ռուսաստանից, այլ և արտասահմանից:

Գանձակի գաւառում վերջին օրերս բռնկե-ցին մի քանի աւաղակներ, որոնք փախչելով աքսորաւորից, թաղնվում էին անտառներում և զարանձաւներում և այդտեղից յարձակվում գիւ-ղացիներին վրա: Արաղակներից մէկը վերջերս մասնակցեց իր մի գողացած ոչխարներից կաղ-մել մի հօտ, բաղկացած 250 գլխից:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍՏՈՒՄ մեզ գրում են. «Հեռագրանի տեսուչ Կոստանեան իր առաջարկած պայմանի համաձայնութիւնը դեռ չը ստացած, ներկայաց-րել է վեհախալին գրաւոր ծրագիր ձեռնարանի վերանորոգութեան և այլ կարգերի փոփոխու-թեան մասին: Արեւոք սա մի խաղ է տեսչի կողմից, թէ պատուով (?) հրաժարելու մի մի-

ջոց... սակայն լսում ենք, որ տեսուչը կատկա-պում է իր իրերը և պատրաստվում է հեռանալ Եջմիածնից... Լսում ենք, որ ձեռնարանի վարչ-յութիւնը այս ուսումնական տարվայ վերջում հեռացրել է ձեռնարանից մօտ 60 աշակերտ ոչ թէ ծուլութեան, անընդունակութեան և դպրո-ցական այլ պահանջներին չը համապատասխա-նելու, այլ աշակերտների թիւը պակասեցնելու և վարչութեան ցանկացած աշակերտների քա-նակութիւնը պահպանելու պատճառով»:

ԲԱՂԱՌԻՅ մեզ գրում են. «Այսօրվանից բաց-ված է յայտարարվում քաղաքի հաշուի պահպան-վող ձրի բուժարանը, առանց խտրութեան կրօնի և ազգութեան այդտեղ բժշկական օգնութիւն կը հասցնվի քաղաքի չքաւոր հիւանդներին և կը արվին նաև դեղեր: Մինչև այժմ չբաւարներին բժշկական օգնութիւն և ձրի դեղեր տրվում էին քաղաքի հիւանդանոցում, որը հեռաւորութեան և շատ անյարմարութիւնների պատճառով շատ էլ մատչելի չէր, և ընդհանրապէս օգնութիւնը սահմանափակվում էր մի նեղ շրջանով. ներկայ բուժարանի բացվելով ձրի բժշկական գործը անհամեմատ բարելաւում է և աւելի նպաստալի-յարմար դիրք է ստանում: Բուժարանի կառա-վարիչ է նշանակված բժիշկ Մ. Զաւենց: Բա-ցի կառավարիչ բժշկից բուժարանում լինում են նաև մի ֆէլդշեր, ֆէլդշերուհի, պրովիդորի օգ-նական և ստորին պաշտօնեաներ: Բուժարանը իր կահ-կարասիքով, գործիքներով, դեղատնով և ծառայողներին ուսնիւով քաղաքին նստում է մօտաւորապէս 6000 ռուբլի: Ինչպէս ենթադր-վում է, շատ մօտիկ ապագայում հարկ կը լինի հրաւիրելու ուրիշ նոր բժիշկներ ևս: Տեղիս բը-ժիշկներից ոմանք արդէն ցանկութիւն են յայտ-նել ձրի ծառայելու: Կին բժիշկ Պողոսիկա այդ մասին նոյն իսկ արդէն գրաւոր առաջարկու-թիւն է արել»:

ԲՈՐԺՈՍՄԻՅ մեզ գրում են. «Սրանից 3—4 օր առաջ մի քանի գաղթական հայ ընտանիքներ, բաղկացած 17 հոգուց, Ախալցխայից եկան այս-տեղ: Բօրժօմի հայ հաւարակութիւնը գրկաբաց ընդունեց իր դժբաղդ եղբայրներին և քրոջերին: Մի քանի օր կերակրելուց յետոյ, հաւաքելով 81 ռուբլի 50 կ., համաձայն իրանց ցանկութեան, ձանապարհ գցեց նրանց դէպի Բաթում»:

ԿԵՐԶԻՅ մեզ գրում են յուլիսի 13-ից. «Այսօր, երեք ժամ տեղացող անընդհատ անձրեւի պատ-ճառով, քաղաքի մի մասը ջրով լցվեց: Ջուրը անկուշտ վիշապի նման կլանեց ամեն բան, ինչի-որ հանդիպեց: Խեղդված մարդկանց թիւը յիսու-նից աւել են հաշվում, մեծ մասամբ երեխաներ են: Ժողովուրդը սարսափահար է, որդեկորոյց մայրերի լացն ու կոծ մարդի սիրտ է ճնշում: Մարդ չէ կարող արաստուծը դպել, տեսնելով այդ թշուառների հառաչանքը—աղիողով աղա-ղակներով խնդում են իրանց սիրելիների դիակ-ները, բայց չեն կարողանում գտնել: Ջուրը դեռ ծովի նման կանգնած է փողոցներում, անց ու դարձ անել կարելի է միայն նաւակներով: Շատ տներ և խանութներ ջրով լցվեցին, ի միջի-այլոց նաև այստեղի փոստ—հեռագրատունը և հնագիտական մուզէյը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Новости» լրագիրը մի առաջնորդող յօդու-ածում հետեւեալ դատողութիւններն է անում հա-յոց հարցի մասին. «Թիւրք-յուսական պայքարին վերջ դնելուց յետոյ, դեռ շատ զարծ է մնում կատարելու: Բայց կրեաական հարցից, կոչ նաև հայոց հարցը, որը չէ կարելի թողնել առանց լուծելու: Բայց, աշխարհագրական պայմանների պատճառով, հայոց հարցը մեծ հոգսեր պէտք է առաջ բերի: Հայերին օգնելու համար պէտք է հոգ տանել Թիւրքիայում ընդհանուր ընթերցանիք մտցնելու մասին, այնպիսի ընթերցանիք, որոնք վերաբերվեն ազգաբնակչութեան բոլոր դա-սակարգերին և բոլոր ժողովուրդներին: Վերջին երեք տարիների պատմութիւնը ցոյց տուեց, թէ սրբան դուստր է այդ խնդիրը: Բայց այդ հանգամանքը չէ կարող և չը պէտք է կանգնեց-նի մեծ պետութիւններին, եթէ միայն նրանք

չեն ցանկանում վերջ դնել Թիւրքիայի գոյու-թեան Բայց եթէ մեծ պետութիւնները ակա-մայ ստիպված են հաշտվել Թիւրքիայի գոյու-թեան հետ, դրանով նրանք իրանց վրա պար-տաւորութիւն են վերցնում վերածել այդ մաշված պետութիւնը մի այնպիսի վիճակի, որ նրա գո-յութիւնը մշտական սպառնալիք չը լինի եւրօ-պական խաղաղութեան համար»:

«Ուրպէս զի ընթերցանիքը չը մնան մեռած տառ, նրանք պէտք է լիակատար ինքնավարու-թիւն տան Թիւրքիայի քրիստոնեայ ազգութիւն-ներին, ինչպէս և բարձր վարչութեան մէջ մաս-նակցելու իրաւունք: Պէտք է մտցնել Թիւրքա-կան կառավարութեան մէջ բոլոր ազգերի հա-մահաւարութեան և ներդրամութեան ըսկզ-բունքները»:

Ռուս լրագիրը մտանում է միայն մի բան ասել, որ պէտք է շտապել, որովհետեւ Թիւրքիան, լաւ զգալով, որ վերջի վերջոյ նրան կը ստի-պեն մտցնել ընթերցանիքը, ամեն միջոց գործ է դնում ֆիշիկ նրանց, որոնց համար պէտք է գոր-ծադրվեն այդ չարաքառտիկ ընթերցանիքը:

ՆՈՐ ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Հեռագրական կցկաւար և լափօնական տեղե-կութիւնները օր օրի վրա հաստատում են, որ Հնդկաստանում յուզմունքը սաստկանում է: Ար-դէն յիշվում են ապստամբներ, որոնք յարձակ-վում են անգլիական զօրքերի վրա, սպանու-թիւններ են գործում: Ի հարկէ, զօրքերն էլ պատասխանում են նոյն կերպով: Մի խօսքով, երկրի ներսում կայ կռիւ:

Մենք դեռ չը գիտենք թէ ինչ չափերի է հասել կամ պիտի հասնէ այդ ներքին կռիւ, բայց գիտենք որ նա կայ և սկսվել է իբրև մի նշան, որով տեղացի ազգաբնակչութիւնը յայտ-նում է իր դժգոհութիւնը անգլիական կառավա-րութեան: Հնդկաստանի համար ներքին ապս-տամբութիւնը մի բնորոշիւն նոր և անծանօթ ձեւաբանութիւն չէ: 1857-ին այնտեղ սկսվեց աւելի ահաւոր, աւելի վառագոյն շարժում, որ պատմութեան մէջ յայտնի է Էսթրայնի ապս-տամբութիւն: անուանով: Անգլիական զօրքերը սկսեցին զսպել այդ ապստամբութիւնը: Մի-փայնեքը կուռում էին քաջութեամբ, անգլիու-թիւններ էին անում, նրանց առաջնորդ Նաւա Սահիբ արդէն տեղական կառավարութիւն էր հաստատել: Բայց անգլիացիները արեան դետե-րի մէջ խեղդեցին այդ յանդուգն ապստամբու-թիւնը. նրանց անգլիութիւնների առաջ ապս-տամբների անգլիութիւնները միանգամայն նը-սեւեացան, չլուսաւորված ծովադնացիներ» չը խնայեցին ոչ կանանց, ոչ երեխաներին. ապս-տամբված գաւառներում ամեն ինչ մասնվում էր սրի և կրակին: Մօտ երկու տարվայ կռիւնե-րից յետոյ ապստամբութիւնը վերջացաւ և Ան-գլիան նորից աւել էր աշխարհի այդ չքնաղ ան-կիւնին, ուր ապրում են 220 միլիոն մարդի:

Սակայն ով յաղթեց:

Անշուշտ Հնդկաստանը: Նրա թափած արիւնը դուր չը կրուս Պէտք է ասել որ Հնդկաստանի նուաճումը էր անգլիական մի առեւտրական ըն-կերութիւն, որ երկար տարիների ընթացքում փողով, բարեկամութեամբ, բայց մանաւանդ զէնքի այծով հեղձնեալ դրաւեց Հնդկական թե-րակողին և կառավարում էր այդ հրաշալի եր-կիրը: Ընկերութիւնը ունէր իր սեփական զօր-քը, նշանակում էր նահանգապետներ, մի խօս-քով կառավարում էր անոսման իրաւունքով: Բայց, լինելով առեւտրական ձեռնարկութիւն, նա առանձին հոգ չէր տանում տեղացի ժողո-վրդի, ընկնելու մոտաւոր առաջադիւթեան համար. ընդհակառակն, երկիրը անխնայ շահա-գործվում էր և նրա բոլոր հարստութիւնները հուրս էին տանվում: Անգլիացիները արհամար-հանքով էին վերաբերվում տեղացիներին, հա-մարելով նրանց կաթնատու կովեր, որոնց կը-թելը նուաճողների իրաւունքն էր: Գնալով հնուաճողների և նուաճվածների մէջ հաստատ-վում էր սուր և անողոր թշնամութիւն: Տեղա-ցիները ոչ մի բարձր պաշտօն չէին ստանում էին պահում, կարծես հակացանցում էին, որ բո-լոր հնդիկները պիտի ծառայեն անգլիացիներ-ին: Ահա թէ ինչ հանգամանքներ ծնեցրին այն ահաւոր ապստամբութիւնը:

Անգլիան թէև յաղթեց, բայց հասկացաւ որ չէ կարելի անտես անել մի ահաղին երկրի կա-րիքները, արդար պահանջները. անգլիական նրբամիտ քաղաքականութիւնը տեսաւ, որ միշտ իր զինուորների սպանների վրա յոյս դնել չէ կարելի. և սկսեց բարեկարգել երկիրը: Կառա-վարութիւնը ոչնչացրեց Հնդկական ընկերու-թեան արտօնութիւնները, իրեց նրանից կառա-վարելու իրաւունքը, ինքը սկսեց կառավարել և միմեանց ետևից մի շարք ընթերցանիք մտցրեց. բացվեցան համալսարաններ, բազմաթիւ այլ գաղութներ, երկաթուղիների ցանցը աւելի լը-տացաւ. տեղական ինքնավարութիւնը հաստատ-վեց լայն հիմքերի վրա, մասնւր ազատութիւն ստացաւ Հնդկաստանը սկսեց իր սեփական, տեղական ինքնուրոյն կենսքը, արագ քայլերով գնաց առաջադիւթեան ձանադարձով: 40 տար-վայ ընթացքում նա ստացաւ մի բարեկարգ, քաղաքակրթվող երկրի համբաւը:

Բայց ոչ մի վարչական սխտեմ միանգամայն ազատ չէ պակասութիւններից. անշուշտ Ան-գլիայի արածների մէջ կան թերութիւններ, կան նոյն իսկ շնաաակար «կողմեր» Ի մի-ջի այլոց կայ այն ցաւալի հանգամանքը, որ այդ ահաղին և ամենահարուստ երկի-րը պարբերաբար ենթարկվում է սովի սոր-սափներին և այնքան անպարտաւոր է դանդում այդ աղետի առաջ, որ ազգաբնակչութիւնը իս-կոյն մնում է անօգնական և սոված: Ե դառ-նում: Անցեալ տարվայ սովից և նրան յաջորդած ժանտախտից ցնցված հնդիկները այժմ սկսել են դանգամանք անգլիական տիրապետութեան պակասութիւնների դէմ: Զաւոճումը արտայայ-տութիւնը առ այժմ այն ապստամբական փոր-ձերն են, որոնք զոհ գնում անգլիական զինուորները:

Մենք արդէն հաղորդեցինք «Մալի» մէջ, որ անգլիական կառավարութիւնը ներկայ չլիթու-թիւնների առթիւ կամենում է մի շարք խիստ միջոցներ ձեռք առնել: Մեր կարծիքով Ան-գլիան բոլորովին սխալ և արեւալի ձանապարհ է ընտրում, մի ձանապարհ, որի վրա վաղուց կանգնած է Թիւրքիան և որի վրա էլ նա փորել է իր գերեզմանը—ժամանակի առաջացած բո-ղաբնակչութեան կարիքներից անաջացած բո-ղաբները զէնքի ոյծով խեղդելը հին աշխարհի, բռնութեան դարերի գործ էր: Անգլիան ինքը ցոյց է տուել Հնդկաստանին որ միայն այն պե-տութիւնն է առաջադէմ ու կենսունակ, որ ու-չադրութեամբ ակնաջ է դնում իր հպատակների դանգամանքներին և ոչինչ չէ խնայում այդ դան-գամանքը վերացնելու համար: Եւ Անգլիան պի-տի հետեւ այդ ուղղութեան, Թիւրքիայի պէս նեխված, ոչինչ ապագայ չունեցող կրօնական բռնապետութեան թողնելով խեղդվել երկրի ներքին բարեփոխութիւնների, արդար օրէնքնե-րի վախից:

Վիկտորիայի յօդուանի ժամանակ լօրդ Բոզ-բէրի առաջ, որ Անգլիան համաշխարհային աի-րապետութիւն է ձեռք բերել ոչ այնքան իր զօրքերի և թնդանութիւնների միջոցով, որքան իր ազատ հիմնարկութիւններով:—Իսկ միանգամայն անուրանալի է:

ՆԱՄԱԿ ԲՈՂԱՐՄԱՅԻՅ

Ռուսաճուր, յուլիսի 5-ին

Գաղութական ընտրութիւնը վերջանալու մօտ են, սակայն ընդհանուր առմամբ աշակերտը շատ քիչ օգտուած են: Ուղիղ խօսելով, գրեթէ 10—15 տարիների ի վեր տեղոյս հայ վարժարանը այն-քան կը յետադիմէ, որ այլ ևս իր կործանման գագաթնակէտին հասած է: Մյուս պատճառը մասնաւորաբար երկուք է. նախ կանոնաւոր վար-ժապետներ չունենալիս է, ու երկրորդ, վարժա-րանի չէնքը բոլորովին անյարմար ըլլալն է: Հարկ չեմ տեսնել աւելի մանրամասնութեան մէջ մանրէ զարդի խեղճութեան վերաբերմամբ:

Մեր էֆէնդիները վերջապէս հաճեցան նորէն հանգանակութեան սկսել երկուս վարժարան մը կառուցանելու նպատակաւ: Արդէն մի քանի տա-րի առաջ մի քիչ փարայ հաւաքած էին, յետոյ չենք գիտեր ինչ նկատումներով խնդիրը զոյուե-ցաւ: Ինչ որ է, այս անգամ գտնէ կարենան գործը գլուխ հանել հանդանակելով բաւական գումար մը, որն բաւ է վարժարանի կառուցման համար: Ռուսաճուրի հայ ազգաբնակչութիւնը, որ Բուլգարիոյ միւս քաղաքներու ազգաբնակչութիւն-

հեղեղ շատ աւելի բարձր դիրք մը բռնած է, այսօր ամեն տեսակէտով պէտք է աշխատի կառնել եղածին չափ շուտ իրականացնելու այս ամենակարեւոր հարցը, կառուցանելով երկսեռ վարժարան մը, ու մի քանի կարող և արժանաւոր վարժապետներ բերել տալով և յոռանք որ մօտ ապագայի մէջ կարող պիտի լինի իր առջի տեսքը բռնել. ահա այն ատեն միայն Ռուսները հայն կարող է աղաւթ համարձակ պարծենալ թէ՛ այս, մենք կանոնաւոր վարժարան ունինք:

Բ. Գեորգեան

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՅ

Չիկագո, յունիսի 15 ին

Ոչ մի երկիր այնչափ չէ յուզել կրօնական խնդիրը, որչափ Միացեալ Նահանգաց Ժողովուրդը: Քառասներորդ դարու ինքաւ կրօնի հիմնարկուններն և առաքելներն Ամերիկայէն պիտի ըլլան: Միտիսիսական մոլոկանդ հոսանքը դադարելու վրա է, նոր շրջան մը կը սկսի այսօր: Կրօնը դիտարկեալ հետ հաշտեցունելու կը ջանան ներկայիս պրօֆէսոր Ատլէր, Սալէք, Հէյլ և նաև հանրաժանութ ղօկտոր Մանկասարեան: Թէ՛ քննչակց կը գծէ անհաւատի սահմանը Մանկասարեան, մենք ստորի կախովիները: Մանկասարեան կը խօսի ամեն կիւրակէ Զիքալօյի Օփերա-Հաուզի (Opera-Hause) մէջ, ի ներկայութեան հաղաբաւոր ինտելիգենտ ունկնդրաց:

Հարկը յիստու տարի առաջ Անգլիոյ դատարանաց միտն մէջ հարցուցին ընդհանուր դատաւարներ թէ՛ ինչ ըսել է անհաւատութիւնը. նա պատասխանեց՝ «Շատ որ չի հաւատար Քրիստոսի, անհաւատ մ'է: Երբ կը նայինք աշխարհի տարբեր մասանց վրա, կը տեսնենք, որ նա, որ իր երկրի կրօնին չի հաւատար, անհաւատ մ'է. ասով մասնական մը Թիւրքիոյ մէջ հաւատացեալ մէ, իսկ Լժնտօնի մէջ անհաւատ մ'է: Քրիստոնեայ մը Պոնտօնի մէջ հաւատացեալ իսկ փեթիթի մէջ անհաւատ մ'է: 1861-ին Ղազարաթի անհաւատ բառին սահմանը փոխեց և ըսաւ. «Այլ ևս ոչ հիշան, ոչ մասնէտականը, և ոչ ալ կաթօլիկը անհաւատներ են, այլ անոնք, որ բնաւ կրօնը չունին: Այսօր սակայն անհաւատ բառին սահմանը աւելի ընդարձակ է և որոշ: Անհաւատութիւն մը կայ, որ միասակար է, անհաւատութիւն մ'ալ կայ, որ օգտակար է: Մարդկային պատմութեան մէջ կը տեսնենք, թէ ամեն դար իւր անհաւատն ունենցած է, և զրեթէ այդ դարու յառաջագիւտութիւն այն անհաւատի կամ անհաւատներին կը պարտի: Մէկ դարու անհաւատն յաջորդող դարու սուրբն եղած է: Յայտ կուտայտ հայութեան, նորեկ քրիստոնեաներն անհաւատներ էին. յայտ կաթօլիկ աշխարհին գերմանացի բողոքականն չարախրտ անհաւատ մ'էր: Մարդկութիւնն միշտ հաւատացեալ, բայց ազէտ պիտի մնար: Բողոքեան առաջագիւտի է:

Առաջին անհաւատն Անագաւորութիւնն էր, որ հակառակ բոլոր հեղին հաւատոյն, բողոքեց թէ Ապոկալիպսի չի հեղինակն և հրատարակեալ արեւին, անհաւատ կոչեցին զայն, բայց նա էր, որ բոլոր Յունաստանի մէջ քննադատական ոգին արթնացուց, և զփերկելէ և զՊաղատոն յառաջ բերաւ: Սոկրատ Ողիմպեան անբարոյական աստուծոյն դէմ բողոքեց, ձայն բարձրացուց Աթէնքի փողոցներուն մէջ և մահուան դատապարտուեցաւ. բայց Սոկրատի անհաւատութիւնն էր, որ 2000 տարուան փիլիսոփայութիւնն սնուց: Հայփիլաթիսն էր, որ իր ժամանակի իմաստասիրութիւնն քննադատեալով Աթէնքի քրիստոնեայ Աթէնքի փոխեց: Իսկ ներկայի յառաջագիւտութեան մեծ մասը կը պարտինք Դարվինի, Սպէնսըրի, Հէքսլիի, Էմբընի, Փարքըրի և Օմանեայի: Միթէ՛ Քրիստոս ինքը անհաւատ մը չէր, չի բողոքեց իր ժամանակի աստուածաբանական զօգմաներու դէմ, բոլոր նիւթապաշտութեան դէմ կուէնով՝ ժամանակի ուղղափառութեան հիմքն քանդեց, աւանդելով աշխարհին այն յաւիտենական ճշմարտութիւնը, թէ Աստուած հոգի է և զայն պաշտողները հոգիով պաշտելու են: Քրիստոսի անհաւատութիւնն 1800 տարիներու հաւատքն եղած է. անոր անհաւատութիւնն մեր փրկութիւնը եղաւ, անոր անհաւատութիւնը՝ մեր հաւատքը: Տեսնենք թէ որն է միասակար անհաւատութիւնը: Անհաւատներ կան, որ աշխարհի վրա կը նայեն և աչքերնին կը գոցեն, աշխարհին բանաստեղծութիւնն նայել չեն ուզեր, մահուան և յուսախաբութեան դէմ կը բողոքեն և յուսով

հրճուիլ չեն ողբեր այս տեսակ անհաւատից հոգոյն թիւերն բնաւ թոթափած չեն, սրտերնին տրոփած չէ. միայն կենաց շուքը տեսած են և անոր իրականութեան առջև կոյր կը մը: Նոր փառաւոր լուսնեան, մտաց այս վիճակը մտքի հաղորդութեան արդիւնք է: Այն աստուածաբանը, որ պատճառաբանելէ կը վախնայ, տըրանց սրտի մեծութեան մտքի մեծութիւնն անարմատ և անծաղիկ է: Եզրիպտոսի բողոքեան հակա է, բայց գերեզմաններ են. անհաւատ են անոնք, որոց մէջ սիրող գործօնը սովորման եղած են մտքի մեծութեամբ. առանց այս բարոյական անհաւատութեան անհաւատներն անօգուտ են մարդկութեան փոխախառն և տկար ոգիներու համար: Ոչինչ սուրբ է և տիեզերքը համար կատարել մը Այդ տեսակ հոգիներ ձառնապարհի վրա եղած չափին կը նային, անտեսելով ուղիանոսի մեծութիւնն. այդ տեսակները կապիկատիւ հոգիներ են, որ զրպարտիչ բաներ կը մտնան ատելու համար. այս տեսակ հոգիներու ստիգ տակ, և անոնց թիւնաւոր չունչն ծածկուած մարդիկ իրենց գլուխը կը կախեն: Յուսեալ հոգիներ բարձր խորհուրդներ բնաւ չեն յղանար, կը տեսնեն մարդուն մէջ ինչ որ դուր է և անոր բարոյական բարձրութեան աչք կը գոցեն, կը դատապարտեն փոթորիկն և ջրը: Հեղեղն և երբէք չեն խօսեր այն անհաւատ հոռիներուն, զաշտի ծաղկանց, որ զորախտ յուշկածեն Կրօնքի մէջ կը տեսնեն նախապաշարու, ստույթին և աղետ, բայց չեն տեսներ այն հաւատքն յոյսն ու սէրն որ քաղցացուցած են անհաւատ կեանքեր: Եթէ կոյր հաւատք մը կայ, միթէ կոյր անհաւատութիւն մը ալ չը կայ: Ճշմարտութիւնն վախճողն անհաւատ մը է, ճշմարտութիւնը ծածկողն իր մտքին դաւաճանքը: Նա որ իր գաղափարը, կամ իր կուսակցութիւնը կը սիրէ տաւակ ըսն ճշմարտութիւնը, նա անհաւատ մը է: Այն ճիշդութիւնն որ ըսաւ, թէ Ֆրանսիոյ աւելի պիտի սիրէ քան Գերմանիա, որովհետև անհաւատ Ֆրանսիան այնքան չի վնասեր իրենց քան բողոքական Գերմանիա, նա անհաւատ մը է. այն պատմաբանը որ կրօնի պատմութեան էջերն յաճախ սև կը գծէ, նա անհաւատ մը է:

Հրատ

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԵՐ

—Նորերս անգլիական պարլամենտում կըրգոն յայտնեց, որ Նուամ Գրօզին կրեաէի ընդհանուր նահանգապետ նշանակելու հարցը դեռ բանակցութեան առարկայ է մեծ պետութիւններին մէջ: Այժմ գերմանական «National Zeitung» լրագիրը հաղորդում է, որ մի քանի պետութիւններ և մասնաւորապէս Գերմանիան դէմ են Շվեյցարիայի հանրապետութեան նախկին նախագահի կանդիդատութեան այն պատճառով, որ նրա վարմունքը, իբրեւ հայկական կոմիտէի գլխավոր, հարկաւոր երաշխաւորութիւնը չէ ներկայանում, թէ նա կարող է կառավարել Կրեմլին անպատշաճութեամբ: Եթէ սուլթանի այժմեան անվստահութիւնը և կասկածաշունչութիւնը կը ուստականայ Գրօզի նշանակելով, այն ժամանակ խաղող բանակցութիւնների այժմեան զբաւարութիւնները աւելի կը մեծանան: Այդ պատճառով Գերմանիան մերթիւ է իր համաձայնութիւնը տալ Գրօզի կանդիդատութեան:

—Ջաւադ փաշայի կրեաէի ընդհանուր նահանգապետ նշանակելը արդէն խախտուել է Կրեաէի մահաբեկականներին վճռի գործակալութեան հաղորդում են Կանէից, յուլիսի 9 ից, Վահանգապետը գնաց երէկ Բեռլինի ուստի ծովապետի նաւը, որպէս զի այնուիւ տեղեկութիւններ հաղորդէ վերջին անկարգութիւնների մասին: Շարաթ օր թիւրքերը թողնելով քաղաքը, յարձակվեցին քրիստոնեաների վրա: սպանեցին 7 հոգի, վիրաւորեցին երեքին և կուրացրին մէկին: Երէկ, անդէն թիւրքերը յարձակվեցին ուստաց մի զորախմբի վրա, որ պաշարեղէն էր տանում քրիստոնեաների համար:

Ջիւնիւնները վաղեցիկ յարձակվողներին հրացանի կրթի հարուածներով:

—Գերմանիան ամեն քայլում կամենում է անակցութիւն ցոյց տալ Թիւրքիային: Նորերս անգլիական պարլամենտում կըրգոն յայտնեց այն միտքը, որ Կրեաէի խաղաղացումը պէտք է յանձնվի կրեաական քրիստոնեաներին: Եւ ահա «Nord. Allg. Zeitung» Բերլինի կիսապաշտօնական լրագիրը սատիկ աւարկում է այդ կարծիքի դէմ: «Այդպիսի վէճի, ասում է լրագիրը, կը նշանակի մասնակ կրեաական մասնատկանների քրիստոնեաների ձեռքը և զրկել սուլթանին իր ազնիւ հպատակներին պաշտպանելու հնարանորոշիւնից. եթէ կրեաական մասնատկանները նոյնպէս մարդիկ են, մարդասիրութեան հակառակ կը լինի դոհնը մասնատկան փոքրամասնութիւնը քրիստոնեայ մեծամասնութեան ատելութեանը:

—Սուլթանը, ստիպվելով խոնարհվել Եւրոպայի կամքի առաջ, իր սովորութեան համաձայն, աշխատում է նորանոր ձգձգումներ առաջ բերել: Այժմ նա մի նոր ծրագիր է առաջարկում—փոխանակել Թեսալիան Կրեաէի հետ: Բացի դրանից, ինչպէս ենթադրում են, նա նոր դժուարութիւններ պէտք է յարուցանի միւս խնդիրներին վերաբերմամբ: Սակայն, ինչպէս երևում է, Եւրոպայի համբերութիւնը արդէն սպառվել է «Nord» լրագիրը հետեւեալն է գրում յուլիսի 9 ից. «Ե. Գրան անուր յապաղումները և ձգձգումները հայտնութեան բանակցութիւնների ժամանակ, վերջ ի վերջոյ սպառել են Եւրոպայի համբերութիւնը: Թիւրքիան չուտով կը վարձի իր վրա իր կառավարութեան անմբարկելի և անուղղափառ դիրքը: հետեւեալները, որովհետև Եւրոպան հաստատ վճռել է ոչ մի դէպքում չանել Թիւրքիային, բայց այն, որ ձեռնարկել են զետեղանքները: Եթէ Թիւրքիայի այդ վարմունքը կը չարենակվի, Ռուսաստանը և միւս սլետութիւնները կը դիմեն շատ նշանաւոր ուղիմատումով:

—Լրագիրները հաղորդում են որ Անգլիայի քաղաքականութիւնը Թիւրքիայի վերաբերմամբ յանկարծ փոխվեց: Թեսալիական հարցի լուծման ժամանակ, երբ հարկաւոր եղաւ մտածել թէ ինչ ստիպողական միջոցներ պէտք է գործ դնել Թիւրքիայի դէմ, Անգլիան սկսեց զանազան պատճառաբանութիւններ բերել, ուստի ստիպողական միջոցներ հարցը բնաձգվեց: Թամանայն դէպք, յայտնի է որ այդ միջոցների վերաբերմամբ պետութիւնների մէջ համաձայնութիւն չը կայացաւ: Թէ ինչու Անգլիան յանկարծ սկսեց Թիւրքիայի բարեկամութիւնը որոնել, այդ մասով հակասալի է. որովհետև թիւրքը զործակալները սկսել են Հնդկաստանում և Եգիպտոսում ապստամբութիւն քարոզել և անգլիական կառավարութիւնը վախում է այդ ապստամբութիւնից:

—Բուլղարիայում ապրող մակեդոնացիների օրգան «Глас. Макед.» լրագիրը, խօսելով սուլթանի անվերջ ձգձգումների մասին, այն միտքն է յայտնում թէ թիւրքերը շատ լաւ դիմեն ժամանակ վատակել խառնել, օգուտ քաղել ամեն մի հանգամանքից: Նրանց լաւ յայտնի է որ Եւրոպան ինքը պատերազմ չի սկսի, և միայն ստիպողական միջոցը այն կը լինի, որ Եւրոպան Բալկանեան պետութիւններին կառավարիչ պատերազմ սկսել: Ահա այդ բանի առաջին առնելու համար թիւրքերը զօրք են կուտում սահմանների վրա և միևնույն ժամանակ ամեն ջանք գործ են դնում որ կռիւ և փոխադարձ անվստահութիւն սերմանեն Եւրոպայի, Բուլղարիայի և Ռումինիայի մէջ, որպէս զի եթէ լինի պատերազմ, այդ աղբերը չը միանան և թիւրքերը աւան մէկի հետ առանձին գործ ունենան: Լրագիրը չարենակում է. «Իսկ մենք միայն զուր յոյսեր ենք տածում և պահպանում ենք խաղաղութիւնը: Մեզ ասացին որ Էնֆօրմներ կը ստանանք, մենք հաւանացինք և սպասում ենք: Որովմիջ յանցաւոր միամտութիւնն:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աս քանի օրերը ուստաց «Акымерка» ամսագիրը հաղորդեց, որ Ամերիկայում լոյս է ընկել մի մարդ-կոկորդիլոս, որի գլուխը բոլորովին նման է կոկորդիլոսի գլխին, ունի անթիւ սուր առամներ, խօսել չէ կարողանում և սիրում է ապրել ջրի մէջ: Հրէքը, ամսագրի ասելով, ծնվել է բոլորովին առողջ ծնողներից:

մայրը ծնողներու թիւինց քիչ առաջ տեսել էր երկու կոկորդիլոսների կռիւը, սատիկ վախեցել էր և այդ պատճառով ծնեց կոկորդիլոս երեխայ: Այդ լուրը, որ հաղորդում էր մի մասնագիտական օրգան, նման չէր այն անթիւ աստվերներին, որոնք յորինվում են լրագրական լիւրագրականներին: Կողմից, և հաւատ էր ներշնչում Այժմ պրօֆէսոր Շիմկելիչ «С. Пет. Вѣд.» լրագրի մէջ ապացուցանում է, որ այս կոկորդիլոսի պատմութիւնը առասպել է. մի և նոյն ժամանակ նա ցոյց է տալիս, թէ որքան տգէտ է «Акымерка» լրագրի խմբագրութիւնը, որ չը գիտէ, թէ երեխան յոր արգելադրու կերպարանաւորվում է ծնողներու թիւինց շատ առաջ, հետեւաբար ծնողներու թիւինց քիչ առաջ տեսած կոկորդիլոսը ոչինչ աղբեցութիւն չէր անի մօր վրա:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՇԱԿԱՅ, 15 յուլիսի: Կազանի երկաթուղու ապրանքային կայարանում տեղի ունեցած այսօրվայ հրդեհի ժամանակ այրվեցին պատշօթի վրա դուրս հանված 200 վագոն ցորեն, բամբակ, բուրդ և իւր, մինչև 15 վագոն մանուֆակտուրային արարած, 5 ցիստերն նաւթի և մինչև 100 վագոն ցորեն:

Ֆիլիպովով, 15 յուլիսի: Բոյնիցի գործը պրօկուրորը առաջարկում է մահվան պատժի ենթարկել Ղօվկիչին և Վասիլեվին նախաժողովում ղեկավարութեամբ սպանութիւն կատարած լինելուն համար. պրօկուրորի օգնականը սպանութեան մէջ անմեղ է համարում Նիկոլ Բոյնիցին և բացատրում է այն պատճառները, որոնք ապացուցանում են բոսնիացի Գեւչի Բոյնիցի կատարեալ յանցաւորութիւնը: Քննութիւնը դադարեցրված է:

Սիւլի, 15 յուլիսի: Չիտայում, Նալական գայի մօտ, գիշերը ընկնեցը յարձակում գործեցին անգլիական բանակի վրա: Անգլիացիների կողմից սպանված է 1 պորուչիկ, վիրաւորված են 3 շտաբ-օֆիցեր և 1 պորուչիկ:

ԿեՅՈՒ, 17 յուլիսի: «Kölnis. Zeit» լրագրին հրում են Կ. Պոլսի բանակցութիւնների մասին հետեւեալը. «Հայտնութեան զանազան մէջ Լուրցրված չէր մի այնպիսի պայման, որ անվիճելի կերպով երաշխաւորէր պատերազմական տուգանքի վճարումը: Զէ կարելի պահանջել, որ սուլթանը ընդունի մի դաշնագիր, որի կատարումը յոյների կողմից աւելի քան անհատական է: Այդ ղէպում միակ երաշխաւորութիւնը կը լինէր Եւրոպական հակադիւրիւնը յունական ֆինանսների վրա:

Կ. ՊՈԼԻՍ, 17 յուլիսի: Կազմված են հայտնութեան պայմանագրի ինչ յօդուածներ: Կարելի է յոյս ունենալ որ մեծ պետութիւններ կը համաձայնեն յունական ֆինանսների վերահսկողութեան մասին: Թիւրքական շրջաններում յամառ կերպով պնդում են, որ մինչև հայտնութեան դաշնագիր ստորագրելը, պէտք է պահանջել կրեաական հարցի լուծումը:

ԲեՅՈՒՆ, 17 յուլիսի: Գերմանիայի պատերազմական տուգանքի հարցում բռնած դիրքի մասին «National Zeit» ասում է. «Զէ կարելի մտածել, որ Բերլինի կարիքները պատերազմական տուգանքի հարցի մէջ բռնած իր բացատիկ դիրքով կամենար կասեցնել գործերի ընթացքը: Ինքնին կարիքները իր վարմունքով կամենում է աղաւթ պահել իրան ապագայի յանդիմանութիւնից, որ նա, իբր թէ, գրքում էր սուլթանին հրաժարվել Թեսալիայի նման գրաւակները, տալով նրան այնպիսի խոստումներ, որոնց խաբուսիկ նրաւորութիւնը յայտնի էր չէր զրկւած վայրկեաններն:

Ֆիլիպովով, 18 յուլիսի: Պաշտպանողական ճառերից յետոյ դատարանը, երեկոյեան ժամը 7-ին, առանձնացաւ խորհրդակցութեան համար: Գատաւճիտը կարտասանվի վաղը, առաւօտեան ժամը 9-ին:

ԲՕՄԲԵՅ, 17 յուլիսի: Պոնայում նոր՝ ձերբակալութիւններ եղան բրիտանական կառավարութեան ղէմ ապստամբեցնելու մեղադրանքի համար: Զերբակալածների թւումն է «Բէլգրադ» լրագրի հրատարակիչը: Սպասվում են նոր կալանաւորութիւններ:

Կ. ՊՈԼԻՍ, 17 յուլիսի: Լուր կայ, որ յուլիսի 18-ին, Թօփիսանում, կը կայանայ իստ, որի նպատակը կը լինի կազմել մի յօդուած զինուորական վարձատրութեան և յունական ֆինանսների վրա կոմպոզիտ հաստատելու մասին:

Ֆիլիպովով, 17 յուլիսի: Կէս քիշերից յետոյ դատարանը Բոյնիցի գործի մասին յայտարարեց հետեւեալ վճիռը: Կապիտան Բոյնիցի միաձայն ձառնչված է մեղաւոր նախախտածած սպանութեան մէջ սակայն մեղմացնող հանգամանքներով. Նոյնից և Վասիլեւի մեղաւոր են սպանութեան մէջ, առանց նախօրը դատարանութեան, շատ մեղմացնող հանգամանքներով: Կապիտան Բոյնից և Նոյնից զատապարտված են ցմա՛ ծանր բանտարկելութեան, Վասիլեւի վից տարի և ութ ամիս բանտարկութեան, Նիկոլայ Բոյնից արգաքացրած է:

Սիւլի, 17 յուլիսի: Երէկ և անցեալ օրը տեղի ունեցան իրտա կռիւներ չիտայեցիների հետ: Անգլիացիների կողմից սպանված են 13, վիրաւորվել են 43 մարդ:

Типографія Канцел. Главпочт. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. канц.